ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ՈՍԿԵՀԱՏ»
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ
ՀՀ 1144, Մաշտոց 39
Հեռ. +374 (231) 5 29 39
Էլ.փոստ tiv10.voskehat@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ ГОРОДА ВАГАРШАПАТ
ДЕТСКИЙ САД «ВОСКЕАТ»ОНО
РА 1144, ул. Маштоц 39
Тел.: +374 (231) 5 29 39
E-mail: tiv10.voskehat@mail.ru

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR REGION, MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
KINDERGARTEN "VOSKEHAT" CNPO
RA 1144, 39 Mashtots St., Tel.: +374 (231) 5 29 39 , E-mail: tiv10.voskehat@mail.ru

№ 50

«02» հուլիս 2026թ.

«ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ԱԶԱՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ազատյան,

Վաղարշապատի համայնքապետարանի «Ոսկեհատ մանակապրտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ՈՍՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը:

2026 թվականի հունիսի 30-ին Գնորդը ստացել է Ձեր գրությունն առ այն, որ Վաճառողը հրաժարվում է մատակարարել պայմանագրի 21-րդ, 25-րդ, 58-րդ և 59-րդ չափաբաժիններով սահմանված սապրանքները:

Ելնելով վերոգրյալից՝ Վաղարշապատի համայնքապետարանի «Ոսկեհատ մանակապրտեզ »ՀՈԱԿ-ը, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N՝ «ՀՀ ԱՄՎՀ ՈՍՄՊ ԳՀԱՊՁԲ 26/2-4» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, 2026 թվականի հուլիսի 3-ից մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 21-րդ, 25-րդ, 58-րդ և 59-րդ -րդ չափաբաժինների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ